ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի տնօրենի հետևյալ թափուր պաշտոնի համար

1. ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԸ

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված լիազորություններ՝

1) Իրականացնում է ՀՈԱԿ-ի ընթացիկ գործունեության ղեկավարումը,

2) Պատասխանատու է կադրերի ընտրության , Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման, ինչպես նաև օրենքով և կազմակերպության կանոնադրության սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար ,

3) Ներկայացնում է ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը,

4) Կազմում է ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում է համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը ,

5) Իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ ,

Նշված պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) բարձրագույն կրթություն,

բ) հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի երեք տարվա աշխատանքային ստաժ ,

գ) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (ՀՀ Սահմանադրության, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր) ,

Լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

3) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.

4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել.

6) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են.

7) 65 տարին լրացած քաղաքացիները:

Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար պետք է համայնքապետարան ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. գրավոր դիմում՝ (տրվում է հանձնաժողովի անունով):
2. Անձնագրի պատճենը:
3. Կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճեները):
4. Արական սեռի անձինք ներկայացնում են զինգրքույկի կամ կցագրման վկայականի պատճենը:
5.Քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին:
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:
7. Ինքնակենսագրություն
8.Տեղեկանք մշտական բնակության վայրից:

Մրցույթը կկայանա 2024 թվականի հունվարի 23-ին, ժամը 11:00-ին, Ծաղկահովիտի համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2024 թվականի հունվարի 13-ն է:

Այլ տեղեկությունների համար դիմել համայնքապետարան (հեռ.՝ 077-40-73-68) կամ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչություն (հեռ.՝ 0232 3-63-78):

ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ